ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» «_____» 2026 թվականի N _____ -Ն

ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԵՎ ՓՈԽԱՌՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման կարգը՝ ըստ հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ Կառավարության

«___» «_____» 2026 թվականի N _____ -Ն որոշման

ԿԱՐԳ

ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԵՎ ՓՈԽԱՌՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների զուգաձև կիրառությունների կանոնարկման առաջարկների ներկայացման, քննարկման և հաստատման կարգը (այսուհետ՝ Կարգ):

2. Սույն Կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **Կանոնարկում՝** նույն հասկացության կամ հատուկ անվան զուգաձև կիրառություններից մեկի հաստատման գործընթաց:

2) **Հատուկ անուն՝** պետության, մայրաքաղաքի, աշխարհագրական անվան, միջազգային կազմակերպության և միավորման անվանում:

3) **Առաջարկ՝** պետական մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լեզվի կոմիտե ներկայացվող թարգմանված կամ փոխառված հասկացության/անվան կանոնարկման վերաբերյալ փաստաթուղթ:

4) **Կանոնարկման հանձնաժողով՝** փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկումն իրականացնող պետական մարմինների ներկայացուցիչներից և փորձագետներից կազմված մարմին:

3. Կարգը բխում է «Լեզվի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի դրույթներից:

4. Կարգի նպատակն է պետական փաստաթղթերում և օրենսդրության մեջ ապահովել թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների միօրինակ կիրառություն:

II. ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

5. Կանոնարկումը կատարվում է ՀՀ ԿԳՄՍՆ լեզվի կոմիտե ներկայացված առաջարկի հիման վրա: Առաջարկը կազմվում է ըստ Ձև 1-ի և ներկայացվում ըստ սույն Կարգի:

6. Առաջարկ կարող են ներկայացնել պետական կառավարման համակարգի մարմինները: Գիտական կառույցները և պետական այլ հիմնարկներն ու տեղական ինքնակառավարման մարմինները առաջարկը ՀՀ ԿԳՄՍՆ լեզվի կոմիտե կարող են ներկայացնել իրենց գործունեության ոլորտը կարգավորող պետական մարմնի միջոցով:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված մարմիններից բացի, այլ մարմիններից կամ անձանցից ստացված լեզվական զուգաձևությունների վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են տվյալ ոլորտը կարգավորող մարմնի միջոցով:

8. Առաջարկի հիմք է պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված կամ փոխառված հասկացության կամ հատուկ անվան զուգաձև գործածությունը:

9. Առաջարկը ներառում է յուրաքանչյուր հասկացության կամ հատուկ անվան գործածության (դրա փոփոխության) վերաբերյալ հիմնավորում:

10. Առաջարկն ստորագրում և հաստատում է ներկայացնող մարմնի ղեկավարը:

III. ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ

11. Լեզվի կոմիտեն ընդունում է առաջարկը, եթե առաջարկը լիովին համապատասխանում է Կարգի պահանջներին:

12. Բովանդակային ոչ լիարժեք տեղեկությունների և տեխնիկական թերությունների դեպքում Լեզվի կոմիտեն բացթողումները վերացնելու նպատակով առաջարկը վերադարձնում է այն ներկայացրած մարմնին:

13. Առաջարկը տրամադրվում է Կանոնարկման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամներին՝ կարծիք տալու նպատակով:

14. Հանձնաժողովի անդամները 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում առաջարկի վերաբերյալ գրավոր կարծիք են ներկայացնում Հանձնաժողովի քարտուղարին:

15. Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի նախագահը մինչև որոշման կայացումը առաջարկը կարող է ուղարկել փորձաքննության:

16. Հանձնաժողովն ամփոփիչ նիստում որոշում է կայացնում ներկայացված առաջարկի և հիմնավորումների, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների կարծիքների հիման վրա:

17. Հանձնաժողովի որոշումը ներառում է հասկացությունների և հատուկ անունների կանոնարկված ձևերը և դրանցից յուրաքանչյուրին վերաբերող հիմնավորումը:

18. Որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

19. Հանձնաժողովի որոշումը հաստատվում է Լեզվի կոմիտեի նախագահի հրամանով:

20. Հանձնաժողովի որոշումներում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ և անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

IV. ԿԱՆՈՆԱՐԿՎԱԾ ՁԵՎԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

21. Մինչև կանոնարկված ձևերի հրամանի ուժի մեջ մտնելը հրամանի բովանդակությունը կարող է բողոքարկվել Լեզվի կոմիտե: Բողոքարկման կարգը հաստատվում է Լեզվի կոմիտեի նախագահի հրամանով:

22. Բողոքը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում Լեզվի կոմիտեի նախագահի հրամանով հրավիրվում է Հանձնաժողովի լրացուցիչ նիստ, որին ներգրավվում են հրավիրյալ ոլորտային մասնագետներ՝ լրացուցիչ մասնագիտական եզրակացություն տրամադրելու նպատակով:

23. Հանձնաժողովի լրացուցիչ նիստի որոշումը հաստատվում է Լեզվի կոմիտեի նախագահի հրամանով:

24. Նախագծերի մշակման փուլում դրանցում գործածված հասկացությունների և հատուկ անունների համապատասխանությունը կանոնարկված ձևերին ստուգում է նախագիծը մշակող պետական մարմինը՝ օգտվելով «Նորմատիվ իրավական ու տեխնիկական փաստաթղթերի մշակման ԱԲ-օգնական» գործիքից:

25. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները նախագծերի մշակման փուլում նախագծերում գործածվող հասկացությունների կամ հատուկ անունների մասին մասնագիտական եզրակացություն կարող են ստանալ Լեզվի կոմիտեից:

26. Լեզվի կոմիտեի եզրակացությունը պարտադիր է նախագծի հետագա քննարկման և հաստատման փուլերում հաշվի առնելու համար:

27. Իրավական ակտերն ու պաշտոնական փաստաթղթերը համապատասխանեցվում են Հանձնաժողովի որոշմանը՝ որոշումն ընդունելու օրվանից երեք տարվա ընթացքում:

Ձև 1

ԱՌԱՋԱՐԿ

ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԵՎ ՓՈԽԱՌՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ

1. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Ներկայացնող կառույցի, կազմակերպության, ստորաբաժանման անվանումը (լրիվ և կրճատ անվանումը)

Կազմակերպության գործունեության հասցե՝

Հեռախոսահամար՝

(կոնտակտային անձի)

Էլեկտրոնային հասցե՝

(կոնտակտային անձի)

Կառույցի ղեկավարի անուն-ազգանուն

_____

(ստորագրություն, կնիք)

Ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը

_____

2. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(առաջարկի հակիրճ նկարագրությունը)

3. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

- իրավիճակի նկարագրությունը *(տեղեկություններ զուգաձև կիրառությունների վերաբերյալ)*
- կանոնարկման առաջարկի անհրաժեշտությունը
- կանոնարկվող ձևի հիմնավորումը

4. ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ/ՓՈԽԱՌՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Հ/հ	Հասկացության կամ հատուկ անվան բնօրինակ (օրիգինալ) տարբերակը	Օտարալեզու այլ տարբերակները	Հայերենում գործածվող տարբերակները	Առաջարկվող ձևը	Լրացուցիչ տեղեկություններ

_____

(ստորագրություն, կնիք)